ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/77

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Բողոքաբեր՝ «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Հ. Ղազարյանի, ներկայացուցիչ՝ Հ. Քոյլոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/133» ծածկագրով գնանշման հարցում, Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի կարիքների համար մարդատար ավտոմեքենայի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Բողոքաբեր) կողմից 30.06.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Բողոքաբերը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանին 23.06.2020թ.-ին հայտարարված թիվ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/133 ծածկագրով գնանշման հարցման հրավերով ձեռք բերման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություններ՝

1. ձեռքբերվող ավտոմեքենայի վիճակը սահմանել կամ օգտագործված, կամ նոր,

1.1. ձեռքբերվող ավտոմեքենայի վիճակը օգտագործված սահամնելու դեպքում, սահմանել նաև ավտոմեքենայի տեխնիկական վիճակին վերաբերվող հետևյալ պայմանները՝

- դետալների մաշվածության աստիճանը,
- անիվների մաշվածության աստիճանը,
- ներկի թարմության աստիճանը
- սրահի թարմության կամ մաշվածության աստիճանը,
- ավտոմեքենայի նվազագույն վազքը
- և նմանատիպ այլ պահանջներ, որոնց հիման վրա հնարավոր կլինի հստակ գինը առաջարկել

1.2. ձեռքբերվող ավտոմեքենայի վիճակը նոր սահամանելու դեպքում, բացառել «վիճակը իդեալական» պայմանը այդ մասով հստակ սահմանելով Պատվիրատուի պահանջները, ինչպես նաև ավտոմեքենայի արտադրման հստակ տարեթիվը:

2. ամբողջական և հստակ սահմանելով ավտոմեքենայի օգտագործված լինելու վերաբերյալ պայմանները կամ բացառել նման պայման, «վիճակը իդեալական» բառերը հանել և սահմանել հստակ պայմաններ ավտոմեքենայի վիճակի վերաբերյալ, «առնվազն մեկ տարվա երաշխիք» բառերը փոխարինել «առնվազն երեք տարվա երաշխիք կամ 100000կմ վազք, որն առաջինը կլրանա» բառերով, «2018-2020թթ արտադրության» բառերը փոխարինել «2020թ արտադրության» բառերով, ինչպես նաև ավելացնել «ավտոմքեանայի վազքը չի կարող գերազանցել 1000 կիլոմետրը» բառերը:

Բողոքը լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել 30.06.2020թ.-ին, ժամը 09.45-ին և նույն օրը մակագրվել է Բողոքներ քննող անձին:

30.06.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը վերադարձվել է՝ դրանում առկա թերությունները շտկելու համար:

Նույն օրը կրկին ներկայացված բողոքը 30.06.2020թ.-ին ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/77 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

08.07.2020թ.-ին և 24.07.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 08.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.07.2020թ.-ին:

2. «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ն 30.06.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1. Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) 23.06.2020 թվականին հայտարարել է ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/133 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև Ընթացակարգ), Դավթաշեն վարչական շրջանի կարիքների համար մարդատար ավտոմեքենայի ձեռքբերման նպատակով, որի հայտերի բացումը նախատեսված է 30.06.2020թ ժամը 11:00 էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով: Հիմք՝ Պատվիրատուի գնանշման հարցման մասին 23.06.2020 թվականի հայտարարությունը:

1.2. Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում առկա են հետևյալ ձևակերպումները՝ 2018-2020թթ արտադրության, օգտագործված կամ չօգտագործված, թափքի գույնը սև կամ սպիտակ, թափքի տարատեսակը սեդան, վիճակը իդեալական, ինչպես նաև ավտոմեքենայի երաշխիքային ժամկետը սահմանված է առնվազն մեկ տարի: Հիմք՝ 23.06.2020 թվականին հրապարակված թիվ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/133 ծածկագրով գնանշման հարցման հրավեր:

ՀՀ գնումների մասին օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 17-րդ ենթակետի համաձայն՝ գնման առարկայի բնութագիրը՝ գնման առարկայի հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմաններն են:

ՀՀ գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. (...):

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 13-րդ կետի համաձայն՝ պատասխանատու ստորաբաժանման լիազորությունները չեն կարող վերապահվել գնումները համակարգողին: Պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձը (անձինք) պետք է ունենա (ունենան) գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է՝ ելնելով գնման առարկայի տեսակից:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Կարգի 31-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին ներկայացնել հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ առանց նշելու անունը-ազգանունը: Ներկայացված հիմնավորումներն ընդունելի համարվելու դեպքում գնահատող հանձնաժողովը սահմանված ժամկետում դրանցով պայմանավորված փոփոխություններ է կատարում հրավերում

Վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում պետք է փաստել, որ գնման առարկայի բնութագիրը՝ ի թիվս այլնի, ձեռք բերվող ապրանքի ամբողջական և հստակ նկարագիրը պարունակող գնման առարկայի հատկանիշներն է, որը իր հերթին պետք է բացառի տարակերպ մեկնաբանությունները: Նշված օրենսդրական կարգավորումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ելնելով գնման առարկայի առանձնահատկություններից պետք է հնարավորինս հստակ սահմանվեն դրա որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա: Այսինքն եթե ձեռք բերվող ապրանքը իր բնույթով կրում է այնպիսի առանձնահատկություններ, որոնք լրացուցիչ պայմանների պարզաբանման կամ սահմանման անհրաժեշտություն ունեն, ապա այդ մասին նույնպես պետք է նշվի ձեռք բերվող ապրանքի տեխնիկական բնութագրում, որպեսզի հնարավոր լինի ապահովել մեկից ավելի մասնակիցների մասնակցության ապահովումը, քանզի ոչ հստակ և ոչ ամբողջական տեխնիկական բնութագրի սահմանումը կամ երկակի մեկնաբանություններ պարունակող տեխնիկական բնութագիրը անուղղակի խոչընդոտներ կստեղծի մասնակիցների համար, իսկ որոշ դեպքերում ոչ բարեխիղճ մրցակցություն, որը իր հերթին կբացառի նրանց

մասնակցության ցանկությունն ու հնարավորությունը: Նշվածով պայմանավորված Օրենսդիրը սահմանել է գնման հայտի նախագծմանը մասնակցող անձի գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողության ունակության պարտադիր վավերապայման, ինչը պետք է որոշվի ելնելով գնման առարկայի տեսակից, այս նորմի նախատեսումը ոչ թե կրում է ինքնանպատակ բնույթ, այլ պարտադիր վավերապայման վկայակոչված սկզբունքները ապահովելու և տեխնիկական բնութագրի ամբողջական և հստակ սահմանումը ապահովելու համար: Իսկ եթե հրավերի տեխնիկական բնութագրով ամբողջական և հստակ սահմանված չէ ձեռք բերվող ապրանքի նկարագիրը, ապա յուրաքանչյուր ոք իրավունք ունի մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին ներկայացնել հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ դրանցում փոփոխություն կատարելու նպատակով: Ի դեպ հիմնավորումների ներկայացման համար Օրնսդիրը սահմանել է անանունության հնարավորություն ելնելով օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը՝ Երևանի քաղաքապետարանը 23.06.2020 թվականին հայտարարված թիվ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/133 ծածկագրով՝ Դավթաշեն վարչական շրջանի կարիքների համար մարդատար ավտոմեքենայի ձեռքբերման նպատակով գնանշման հարցմամբ սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը

*ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

Ապրանքի									
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Հ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	մատակարարման		
							հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը
1	34111100/1	Մարդատար ավտոմեքենա	հատ			1	ք. Երևան Դավթաշեն վարչական շենք	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 21-րդ օրացուցային օրը ներառյալ, մինչև 31.08.2020

2018-2020թթ. արտադրության, օգտագործված կամ չօգտագործված, թափքի գույնը սև կամ սպիտակ, թափքի տարատեսակը սեդան, վիճակը իդեալական, 5 տեղ 4 դուռ: Շարժիչն ու տրանսմիսիան՝ 122-150 ձիաուժ 1.6-2,0L բենզ. շարային 4-գլանային Dual VVT-

i/, վարիատորային փոխանցումատուփ: Չափսերն ու քաշը՝ Երկ./լայն./բարձր.՝ 4630-4700/1780-1800/1435-1500մմ/, քաշը՝ 1305-1805 կգ/, վառելիքի բաքի տարողությունը 50-60 լիտր/, վառելիքի ծախսը՝ 5.3-8.2 լիտր /: Կոմպլեկտավորումը՝ ABS (Արգելակների ապաբլոկավորման համակարգ), EBD (Արգելակման ուժի բաշխման էլեկտրոնային համակարգ), VSC (հակակողասահքային համակարգ), TRC (անիվների հակատեղապտուտային համակարգ): Ղեկի էլեկտրաուժեղարար, ղեկի տաքացում, ծախակողմյան ղեկ: Սրահի պաստառապատումը՝ կտոր կամ կաշվեպատ երեսվածքով, առջևի և հետևի նստատեղերը տաքացվող և սառեցվող: Կոնդիցիոներ: Մոնիտոր՝ հետադարձ տեսախցիկով: AM/FM/CD աուդիոհամակարգ՝ նվազագույնը 6 բարձրախոսներով և USB/AUX մուտքերով: Bluetooth համակարգ: Բազմաֆունկցիոնալ ղեկանիվ: Նվազագույն 4 անվտանգության բարձիկ: Բոլոր ապակիների էլ. կառավարում: Էլեկտրական կառավարվող, տաքացվող և ավտոմատ ծալվող արտաքին հայելիներ: Կենտրոնական փական (նաև հեռակառավարմամբ): Լուսադիոդային ցերեկային լույսեր: Հակամշուշային առջևի և հետևի լուսարձակներ: 205/55R16 կամ 215/55R17 չափսի անվադողեր՝ թեթևաձույլ այլումինե սկավառակներով: Առնվազն մեկ տարվա երաշխիք: Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը: Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

Վերը նշված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում ՀՀ գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ բնութագրով սահմանված է, որ ավտոմեքենան պետք է լինի օգտագործված կամ չօգտագործված, վիճակը իդեալական և պետք է ունենա առնվազն մեկ տարվա երաշխիք:

Նախ պետք է նշեմ, որ օգտագործված ավտոմեքենան չի կարող իդեալական վիճակում գտնվել կամ արդյոք իդեալական բառով հնարավոր է հստակ նկարագրել գնման առարկան, թե ոչ, քանի որ այն առաջացնում է անորոշ և տարակերպ մեկնաբանություն: Ինչ վերաբերվում է ձեռքբերման ենթակա ավտոմեքենայի օգտագործված կամ չօգտագործված լինելուն և դրանց համար նույն տեխնիկական պայմաններ սահմանելուն, ապա հայտնեմ, որ դա ողջամիտ մեկնաբանության արդյունքում նույնիսկ անհնարին է և ինչ կերպ կարող է օգտագործված ավտոմեքենային տեխնիկական վիճակը լինել նույնը նոր հետ, այս դեպքում տեխնիկական բնութագրին վերաբերվող բաժնում օգտագործված ավտոմեքենայի մասով անհրաժեշտ է լրացնել լրացուցիչ պայմաններ: Ավտոմեքենայի օգտագործված լինելու մասով հարկավոր է հստակ նշել ինչ նկատի ունի Պատվիրատուն, հարկավոր է հստակ սահմանել օգտագործված ավտոմեքենայի դետալների մաշվածության, անիվների մաշվածության, ինչու ոչ նաև ներկի և սրահի թարմության նվազագույն և առավելագույն պահանջներ, ինչպես նաև նշել ավտոմեքենայի նվազագույն վազքը, ի դեպ վազքի մասին նշում պետք է կատարել նաև ավտոմեքենայի երաշքիխային ժամկետը սահմանելիս, քանի որ ավտոմեքենայի դեպքում երաշխիքային ժամկետները սահմանվում են տարի/վազք հարաբերակցությամբ, օրինակ՝ ավտոմեքենայի երաշիքային սպասարկման համար կարող է սահմանվել 3 տարի կամ 100000կմ վազք, որից հետո պարտադիր լրացվում են նաև «որն առաջինը կլրանա» բառերը, որից երևում է, որ երաշխքի համար հիմնական գործոնը հանդիսանում է ավտոմեքենայի վազքը: Ինչպես նաև ծառայողական ավտոմեքենաների ձեռքբերման դեպքում առաջարկում եմ առաջնոդվել նաև ՀՀ կառավարության 24 հուլիսի 2008 թվականի N 830-Ն որոշմամբ սահմանված պայմաններով, համաձայն որի ավտոմքեանայի վազքը չի կարող գերազանցել 1000 կիլոմետրը, իսկ արտադրության տարեթիվը պետք է համընկնի ձեռքբերման տարեթվի հետ: Ինչ վերաբերվում է ձեռքբերման ենթակա ավտոմեքենայի օգտագործված կամ չօգտագործված լինելուն և դրանց համար նույն տեխնիկական պայմաններ սահմանելուն, ապա հայտնեմ, որ դա ողջամիտ մեկնաբանության արդյունքում նույնիսկ անհնարին է և ինչ կերպ կարող է օգտագործված ավտոմեքենային տեխնիկական վիճակը լինել նույնը նոր հետ, այս դեպքում տեխնիկական բնութագրին վերաբերվող բաժնում օգտագործված ավտոմեքենայի մասով անհրաժեշտ է լրացնել լրացուցիչ պայմաններ: Ավելին և որ ամենակարևորն է ինչ չափանիշներով պետք է գնահատվի գնային առաջարկը, քանզի էականորեն կդարբերվի օգտագործված և նոր ավտոմեքենաների գները, իսկ մասնակիցները չեն կարող ներկայացնել մեկից ավելի հայտեր, որպեսզի յուրաքանչյուր

մասով առանձին գին հնարավոր լինի սահմանել, ուստի հայտնվելու են երկընտրանքի առջև: Եվ օգտագործված ավտոմեքենային համար ցածր գին առաջարկողները կհայտնվեն անբարեխիղճ մրցակցության մեջ, քանզի նրանց առաջարակը չի կարող բավարարել տեխնիկական բնութագրի իդեալական վիճակ պայմանին, իսկ եթե հայտերի գնահատման փուլում դրանք գնահատվեն իդեալական վիճակ պայմանին համապատասխան, ապա իգտագործված ավտոմեքենային վերաբերվող հայտերը մրցույթը հաղթելու հնարավորություն ընդհանրապես չեն ունենա: Նշվածով պայմանավորված գտնում եմ, որ նույն գնաման ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող ավտոմեքենայի հրավերը չի կարող լինել կամ օգտագործված կամ նոր, քանզի ինչպես արդեն նշեցի այն կստեղծի անբարեխիղճ մրցակցություն և մրցակցային ոչ համասար պայմաններ և Պատվիրատուն պետք է հայտարարի կամ օգտագործված կամ նոր ավտոմեքենայի ձեռքբերման վերաբերյալ հրավեր: Ինչ վերաբերվում է նոր ավտոմեքենայի ձեռքբերմանը, ապա այս պարագայում պետք է բացառել «վիճակը իդեալական» պայմանը հստակ սահմանելով Պատվիարտուի նախըտրած պայմանները, քանզի այն տարակերպ մեկնաբանության առիթ կստեղծի, ինչպես նաև պետք է հստակ սահմանել ավտոմեքենայի արտադրման տարեթիվը, ինչը բխում է նաև գնման առարկայի նախահաշվային գնի պլանավորման՝ տվյալ գնման առարկայի շուկայական գնի ուսումնասիրության գործընթացից, քանզի դրանով պայմանավորված ավտոմեքենայի գինը տարբերվում է և կստեղծի անբարեխիղճ մրցակցություն. Օրինակ՝ 2018 թվականին արդադրված նույն մոդելի, նույն տեխնիկական պայմաններով ավտոմեքենան ավելի ցածր գին կունենա, քան 2020 թվականին արտադրվածը և կախված հայտ ներկայացնողի բարեխղճությունից մասնակիցը կարող է ներկայացնել նվազ գին մատակարարելով 2018 թվականի արտադրության ավտոմեքենա, իսկ այն մասնակիցը, որ առաջարկել էր բարձր գին նպատակ էր հետապնդում մատակարարել 2020 թվականի արտադրության ավտոմեքենա, և գնին համարժեք ձեռքբերվող ապրանքի պայմանը ապահովել հնարավոր չի լինի: Եվ որպեսզի մասնակիցները ունենան գնային առաջարկի հավասար պայմաններ, ապա ավտոմեքենայի արտադրության տարեթիվը նույնպես պետք է հստակ նշվի առանց միջակայքի, որպեսզի առաջարկվող ավտոմեքենաների գները լինեն հավասար պայմաններում:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանին 23.06.2020թ.-ին հայտարարված թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/133» ծածկագրով գնանշման հարցման հրավերով ձեռք բերման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություններ՝

1. ձեռքբերվող ավտոմեքենայի վիճակը սահմանել կամ օգտագործված, կամ նոր,

1.1. ձեռքբերվող ավտոմեքենայի վիճակը օգտագործված սահամնելու դեպքում, սահմանել նաև ավտոմեքենայի տեխնիկական վիճակին վերաբերվող հետևյալ պայմանները՝

- դետալների մաշվածության աստիճանը,
- անիվների մաշվածության աստիճանը,
- ներկի թարմության աստիճանը
- սրահի թարմության կամ մաշվածության աստիճանը,
- ավտոմեքենայի նվազագույն վազքը
- և նմանատիպ այլ պահանջներ, որոնց հիման վրա հնարավոր կլինի հստակ գինը առաջարկել

1.2. ձեռքբերվող ավտոմեքենայի վիճակը նոր սահամանելու դեպքում, բացառել «վիճակը իդեալական» պայմանը այդ մասով հստակ սահմանելով Պատվիրատուի պահանջները, ինչպես նաև ավտոմեքենայի արտադրման հստակ տարեթիվը:

2. ամբողջական և հստակ սահմանելով ավտոմեքենայի օգտագործված լինելու վերաբերյալ պայմանները կամ բացառել նման պայման, «վիճակը իդեալական» բառերը հանել և սահմանել հստակ պայմաններ ավտոմեքենայի վիճակի վերաբերյալ, «առնվազն մեկ տարվա երաշխիք» բառերը փոխարինել «առնվազն երեք տարվա երաշխիք կամ 100000կմ վազք, որն առաջինը կլրանա» բառերով, «2018-2020թթ արտադրության» բառերը փոխարինել «2020թ արտադրության» բառերով, ինչպես նաև ավելացնել «ավտոմքեանայի վազքը չի կարող գերազանցել 1000 կիլոմետրը» բառերը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 30.06.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/9789-2020 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին՝ հնարավորություն տալով «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի կողմից 30.06.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 20.07.2020թ.-ի թիվ 61/12774 գրությամբ ներկայացրել է ընթացակարգի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ չներկայացնելով գրավոր դիրքորոշում:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/77 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի կարիքների համար մարդատար ավտոմեքենայի ձեռքբերման նպատակով 23.06.2020թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/133» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Մրցույթի հրավերի տեքստը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 22.06.2020թ. թիվ 2 որոշմամբ: Հայտերի բացման նիստի օր է սահմանվել 30.06.2020թ.-ին, ժամը 11:00-ին:

iii. Հրավերով հաստատվել է թիվ 6 հավելվածը՝ ապրանքի մատակարարման պայմանագրի նախագիծը (այսուհետ նաև՝ պայմանագրի նախագիծ), այդ թվում նաև՝ պայմանագրի թիվ 1 հավելվածը՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը:

iv. Թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել են հետևյալ պայմանները՝

Ապրանքի									
Հ/Հ	*գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)*	*անվանումը*	*Հ/Մ*	*միավոր գինը*	*ընդհանուր գինը*	*ընդհանուր քանակը*	*մատակարարման*		
							հասցեն	*ենթակա քանակը*	*Ժամկետը*
1	**34111100/1**	Մարդատար ավտոմեքենա	հատ			1	ք. Երևան Դավթաշեն վարչական շենք	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 21-րդ օրացուցային օրը ներառյալ, մինչև 31.08.2020

2018-2020թթ արտադրության, օգտագործված կամ չօգտագործված, թափքի գույնը սև կամ սպիտակ, թափքի տարատեսակը սեդան, վիճակը իդեալական, 5 տեղ 4 դուռ: Շարժիչն ու տրանսմիսիան՝ 122-150 ձիաուժ 1.6-2,0L բենզ. շարային 4-գլանային Dual VVT-i/,

վարիատորային փոխանցումատուփ: Չափսերն ու քաշը՝ Երկ./լայն./բարձր.՝ 4630-4700/1780-1800/1435-1500մմ/, քաշը՝ 1305-1805 կգ/, վառելիքի բաքի տարողությունը 50-60 լիտր/, վառելիքի ծախսը՝ 5.3-8.2 լիտր/: Կոմպլեկտավորումը՝ ABS (Արգելակների ապաբլոկավորման համակարգ), EBD (Արգելակման ուժի բաշխման էլեկտրոնային համակարգ), VSC (հակակողասահքային համակարգ), TRC (անիվների հակատեղապտուտային համակարգ): Ղեկի էլեկտրաուժեղարար, ղեկի տաքացում, ձախակողմյան ղեկ: Սրահի պաստառապատումը՝ կտոր կամ կաշվեպատ երեսվածքով, առջևի և հետևի նստատեղերը տաքացվող և սառեցվող: Կոնդիցիոներ: Մոնիտոր՝ հետադարձ տեսախցիկով: AM/FM/CD աուդիոհամակարգ՝ նվազագույնը 6 բարձրախոսներով և USB/AUX մուտքերով: Bluetooth համակարգ: Բազմաֆունկցիոնալ ղեկանիվ: Նվազագույն 4 անվտանգության բարձիկ: Բոլոր ապակիների էլ. կառավարում: Էլեկտրական կառավարվող, տաքացվող և ավտոմատ ծալվող արտաքին հայելիներ: Կենտրոնական փական (նաև հեռակառավարմամբ): Լուսադիոդային ցերեկային լույսեր: Հակամշուշային առջևի և հետևի լուսարձակներ: 205/55R16 կամ 215/55R17 չափսի անվադողեր՝ թեթևաձույլ ալյումինե սկավառակներով: Առնվազն մեկ տարվա երաշխիք:

v. www.armeps.am կայքում առկա տվյալների համաձայն՝ հայտարարված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/133» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ է ներկայացրել 1 (մեկ) մասնակից:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի կողմից 30.06.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է մասնակի և ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի կարիքների համար մարդատար ավտոմեքենայի ձեռքբերման նպատակով 23.06.2020թ.-ին հայտարարված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/133» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ ձեռքբերվող մարդատար ավտոմեքենայի բնութագիրը, համաձայն որի՝ 2018-2020թթ արտադրության, օգտագործված կամ չօգտագործված, թափքի գույնը սև կամ սպիտակ, թափքի տարատեսակը սեդան, վիճակը իդեալական, 5 տեղ 4 դուռ: Շարժիչն ու տրանսմիսիան՝ 122-150 ձիաուժ 1.6-2,0L բենզ. շարային 4-գլանային Dual VVT-i/, վարիատորային փոխանցումատուփ: Չափսերն ու քաշը՝ Երկ./լայն./բարձր.՝ 4630-4700/1780-1800/1435-1500մմ/, քաշը՝ 1305-1805 կգ/, վառելիքի բաքի տարողությունը 50-60 լիտր/, վառելիքի ծախսը՝ 5.3-8.2 լիտր/: Կոմպլեկտավորումը՝ ABS (Արգելակների ապաբլոկավորման համակարգ), EBD (Արգելակման ուժի բաշխման էլեկտրոնային համակարգ), VSC (հակակողասահքային համակարգ), TRC (անիվների հակատեղապտուտային համակարգ): Ղեկի էլեկտրաուժեղարար, ղեկի տաքացում, ձախակողմյան ղեկ: Սրահի պաստառապատումը՝ կտոր կամ կաշվեպատ երեսվածքով, առջևի և հետևի նստատեղերը տաքացվող և սառեցվող: Կոնդիցիոներ: Մոնիտոր՝ հետադարձ տեսախցիկով: AM/FM/CD աուդիոհամակարգ՝ նվազագույնը 6

բարձրախոսներով և USB/AUX մուտքերով: Bluetooth համակարգ: Բազմաֆունկցիոնալ ղեկանիվ: Նվազագույն 4 անվտանգության բարձիկ: Բոլոր ապակիների էլ. կառավարում: Էլեկտրական կառավարվող, տաքացվող և ավտոմատ ծալվող արտաքին հայելիներ: Կենտրոնական փական (նաև հեռակառավարմամբ): Լուսադիոդային ցերեկային լույսեր: Հակամշուշային առջևի և հետևի լուսարձակներ: 205/55R16 կամ 215/55R17 չափսի անվադողեր՝ թեթևաձույլ ալյումինե սկավառակներով: Առնվազն մեկ տարվա երաշխիք:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձը փաստում է, որ բողոքի քննության վեճի առարկա հանդիսացող ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիրը, մասնավորապես՝ ***«վիճակը իդեալական»*** պահանջը՝ հակասում է Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջներին, քանի որ այն ամբողջությամբ և հստակ չի նկարագրում ձեռք բերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Պատվիրատուն նման բնութագիր սահմանելով չի ապահովել մրցակցության հավասար պայմաններ՝ հնարավոր մասնակիցների համար, որի արդյունքում գնումների գործընթացում առաջացվել են մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ: Վերոնշյալը ապացուցվում է նաև այն հանգամանքով, Պատվիրատուի կողմից Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի կարիքների համար մարդատար ավտոմեքենայի ձեռքբերման նպատակով 23.06.2020թ.-ին հայտարարված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/133» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Պատվիրատուն բողոքի քննության ընթացքում Բողոքներ քննող անձին չներկայացրեց վերջինիս կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտած չլինելու մասին վերաբերելի ապացույց առ այն, որ սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչը՝ մարդատար ավտոմեքենայի վիճակի իդեալական լինելու պահանջի սահմանումը բացառում է տարակերպ մեկնաբանությունը, չի խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը և այլն: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Պատվիրատուն ունեցել է բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով գործով ներգրավված անձանց ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին չի ներկայացրել «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/133» ծածկագրով ընթացակարգի Հրավերի պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված՝ մարդատար ավտոմեքենայի վիճակի իդեալական լինելու պահանջի Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին

համապատասխանության մասին որևէ վերաբերելի ապացույց, որ նմանակերպ պահանջը ապահովում է մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար և որ սահմանված պայմանը տարակերպ մեկնաբանման տեղ չի տալիս, որով հնարավոր կլիներ հերքել և բացառել բողոքաբերի կողմից բողոքով բերված փաստական հանգամանքները: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Պատվիրատուն ունեցել է բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Անդրադառնալով բողոքով ներկայացված Պատվիրատուի կողմից հայտարարված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/133» ծածկագրով ընթացակարգի Հրավերի պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված մնացած տեխնիկական պայմանների՝ Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթներին չհամապատասխանելու վերաբերյալ որպես իրավական հիմք ներկայացված ՀՀ կառավարության 24.07.2008թ.-ի թիվ 830-Ն որոշմանը, ապա Բողոքներ քննող անձն հաստատված չի համարում այն հանգամանքը, որ սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները խոչընդոտում են հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը, քանի որ տվյալ որոշումը վերաբերում է ՀՀ պետական մարմինների, պետական հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների ծառայողական (բացառությամբ պաշտոնատար անձանց կամ աշխատողների սպասարկման համար չնախատեսված հատուկ նշանակության) ավտոմեքենաների առանձին չափորոշիչներին, որը սույն դեպքում կիրառելի չէ՝ Պատվիրատու Երևանի քաղաքապետարանի որպես համայնք հանդիսանալու հանգամանքից ելնելով:

Ուստի, ելնելով վերագրյալներից, Բողոքներ քննող անձը գտնում է, որ բողոքով ներկայացված մնացած պահանջները, բացառությամբ 1.1 կետի, ենթակա են մերժման:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները հիմնավոր են մասնակի՝ մարդատար ավտոմեքենայի ***«վիճակը իդեալական»*** պահանջի մասով, այդ պահանջն անհիմն է, այն ամբողջությամբ և հստակ չի նկարագրում ձեռք բերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում Երևանի քաղաքապետարան կողմից հայտարարված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/133»

ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը պետք է փոփոխել՝ հեռացնելով մարդատար ավտոմեքենայի ***«վիճակը իդեալական»*** պահանջը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի կողմից 30.06.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/77 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի:

Պարտավորեցնել «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/133» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կատարել սույն որոշմամբ նշված փոփոխությունները՝ համապատասխանեցնելով Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթներին:

Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**